

**ԼԱՏԻՆԱՄԵՐԻԿՅԱՆ ԷԿՉԻՍՏԵՆՑԻԱԼԻՉՄԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Էքզիստենցիալիզմը՝ որպես գրական աշխարհայացք, 20-րդ դարի երկրորդ կեսին տարածում գտավ ոչ միայն եվրոպական և ամերիկյան, այլև նույնիսկ ընդգծված ազգային նկարագիր և արմատներ ունեցող այնպիսի երկրների գրականություններում, ինչպես օրինակ պարսկական (Ղոլամիոսեյն Սաեդի, Նիմա Յուշիջ) կամ Ճապոնական գրականության մեջ (Կոբո Աբե, Օսամու Դադզայ, Կենձաբուրո Օե): Իհարկե այդ պրոցեսը զգալի չափով տեղի ունեցավ եվրոպական մշակույթի ազդեցությամբ, նույնը կարելի է ասել ընդգծված ազգային-միջակայական շերտեր ունեցող լատինաամերիկյան գրականության մասին, որը, սակայն, ի տարբերություն արևելյան երկրների, այնքան էլ հին չէր և նոր էր կայանում:

Մեքսիկացի ականավոր գրող և տեսաբան, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օգտավիո Պասը նկատում է, որ Լատինական Ամերիկայի երկրների գրականություններում առանձին հոսանքներ և ուղղություններ չկան¹: Այն, ինչ Վենեսուելայի խոշորագույն գրողներից Արթուրո Բուլար Պիետրին անվանում էր մոգական, կուբացի Ալեխո Կարպենտյերը՝ «կախարդական ռեալիզմ», գերազանցապես ձևավորվել է եվրոպական սյուրռեալիզմի (գերիրապաշտության) ազդեցությամբ: Մոգական ռեալիզմը, ըստ էության, եվրոպական սյուրռեալիզմի հնարքների և հնդկացիական միջակայական պատկերամտածողության համադրություն է: Կարելի է ասել, որ սյուրռեալիստական տարրը լատինաամերիկյան գրականության մեջ եվրոպականի ազդեցությունն է, իսկ բուն մոգականը՝ հնդկացիական բանահյուսությամբ ներծծված իրականության առանձնահատկությունը: Նույն բնորոշումը կարելի է տալ նաև լատինաամերիկյան էքզիստենցիալիզմին (Էդուարդո Մալեա, Ռոբերտո Արլտ, Էռնեստո Սաբատո, Խոսե Դոնոտո, Խուան Կառլոս Օնետտի): Զգալի չափով այն ձևավորվում է իսպանական էքզիստենցիալիզմի ազդեցությամբ:

Կարելի է առանձնացնել լատինաամերիկյան էքզիստենցիալիզմի վրա ազդեցություն գործած իսպանացի երկու խոշորագույն հեղինակ-

1 Paz, Octavio, EL LABERINTO DE LA SOLEDAD, cd. Fondo de Cultura Económica, S.A., Madrid, 1950, p. 6.

կի՝ փիլիսոփա, մշակութաբան Խոսե Օրտեգա-ի-Գասեթի և գրող, փիլիսոփա Միգել դե Ունամունոյի անունները: «Արվեստի ապամարդկանացումը» (La deshumanización del arte) էսսեի², և «Ձանգվածների ապստամբությունը» (Rebelión de las masas) հայտնի ուսումնասիրության հեղինակ Օրտեգա-ի-Գասեթը (1883-1955) 1914-ին լույս ընծայած «Խոհեր Դոն Կիխոտի մասին» (Meditaciones del Quijote) գրքում էքզիստենցիալիստական հասկացություններ և պրոբլեմներ է արծարծում: Միակ իրականությունը, ըստ նրա, մարդկային իրերի հետ կեցությունն է: «Ես-ը ես-ն ու իմ հանգամանքն է»³, - ասում է նա: Փիլիսոփան պնդում էր, թե իր մետաֆիզիկական նախորդում է գերմանացի էքզիստենցիալիստ փիլիսոփա Մարտին Հայդեգերի «Կեցությունը և ժամանակը» (1927) գրքում արծարծված գաղափարներին: Այսպես, «Փնտրելով Գյոթեին» հոդվածում նա գրում է. «1927 թվականին հրատարակված «Կեցությունը և ժամանակը» հիանալի գրքում Հայդեգերը նմանատիպ մի բնորոշում է տալիս: Չեմ փորձի որոշել Հայդեգերի և իմ փիլիսոփայության հարազատության աստիճանը, մասամբ այն պատճառով, որ Հայդեգերի աշխատությունը դեռ անավարտ է, մասամբ էլ այն, որ իմ գաղափարները դեռ համապատասխան հրապարակում չեն ստացել: Պարտքս եմ համարում, սակայն, հայտարարել, թե ես այդ հեղինակին որևէ բանով պարտական չեմ: Հազիվ թե գտնվի նրա երկու կամ երեք կարևորագույն հասկացություն, որ նախապես չհանդիպի իմ նախորդ, նույնիսկ դեռ տասներեք տարի առաջ գրած գրքերում: Օրինակ, կյանքի որպես տազնապի և անապահովության, մշակույթի որպես ապահովության, ապահովության մտահոգության գաղափարներն արդեն հանդիպում են դեռ 1914-ին հրատարակած «Խոհեր Դոն Կիխոտի մասին» գրքում»⁴:

Լատինաամերիկյան էքզիստենցիալիզմի գրականության վրա մեծ ազդեցություն է գործել նաև իսպանացի փիլիսոփա, անվանի արձակագիր Միգել դե Ունամունոն (1864-1936): Նա պնդում էր փիլիսոփայական ճշմարտության անհատական, էքզիստենցիալ բնույթը: Փիլիսոփայությունն, ըստ նրա, գոյի անհատական վերապրումն է: Հե-

2 Հայերեն թարգմանությունը տե՛ս ոսե Օրտեգա-ի-Գասեթ, «Մշակույթի փիլիսոփայություն», Ե., 1999, գրքում:

3 Ortega y G. Obras completas, Vol. I. Ed. Taurus/Fundación José Ortega y Gasset, M., 2004, p. 757.

4 Ortega y G., Josn. Pidiendo Goethe desde dentro. En Obras completas, T. V. M., Taurus. 2006, p. 403.

տաքրքիր է, որ Ունամունոն ևս անընդհատ անդրադառնում էր իսպանական գրականության ամենահռչակավոր կերպարին, բայց եթե Գասեթը Դոն Կիխոտին համարում էր իսպանական պատմության թյուրիմացությունը, «անպտուղ մարազմ», ապա վերջինիս մոտ Դոն Կիխոտը «էքզիստենցիալ կերպար» է (Կամյուի ձևակերպումն է. Կամյուն այդպիսի էքզիստենցիալ կերպար էր համարում Դոն ժուանին), նա ապրում է կյանքի երազի մեջ, իսկ կյանքն ինքը երազ է:

Ընդվզող և ընդվզմամբ աբսուրդը հաստատող այդ կերպարին Ունամունոն անդրադարձել է «Մահ Դոն Կիխոտին», «Վշտահար Ասպետը», «Դոն Կիխոտ և Սանչո», «Ճանապարհ դեպի Դոն Կիխոտի շիրիմ» էսսեներում, «Դոն Կիխոտի վարքը» ու էքզիստենցիալիստական տրամադրությունների փիլիսոփայությունը խտացնող «Կյանքի ողբերգական զգացումը» և «Քրիստոնեության հոգեվարքը» գրքերում: Գրողի բոլոր ստեղծագործություններում նկատելի է կյանքի ողբերգականության այդ զգացումը: Նրան հետաքրքրում են հավատի, մահվան և անմահության խնդիրները: Ըստ նրա, անմահության խնդրի առջև կանգնած սկեպտիկ բանականության և հուսահատական զգացումներից ծնվում է «կյանքի ողբերգական զգացումը», որը որոշակիություն է ստանում որպես մարդկային կեցության վերջավորության անհատական վերապրում: Ունամունոյի փիլիսոփայության հիմնախնդիրն անսահմանի և վերջավորի, մահվան և անմահության, հավատի անհրաժեշտության և ժամանակակից գիտակցության համար հավատի անհնարինության հակասության լուծումը գտնելն է:

Եվ այսպես, կարելի է պնդել, որ լատինաամերիկյան էքզիստենցիալիզմը ձևավորվում է գերմանականին և ֆրանսիականին նախորդող իսպանականի ազդեցությամբ ու զարգանում եվրոպական էքզիստենցիալիզմին զուգահեռ, գրեթե միաժամանակ, և այստեղ գրականագետները դժվարանում են լատինաամերիկյանը միանշանակ եվրոպականի ազդեցություն համարել: Լատինաամերիկյան էքզիստենցիալիզմը, սակայն, բացառապես գրական ֆենոմեն է և ֆրանսիականի նման չունի իր փիլիսոփայական-տեսական հիմքը:

Լատինաամերիկյան էքզիստենցիալիզմի առաջին խոշորագույն հեղինակներից երկուսի՝ Ռոբերտո Արլտի և Էդուարդո Մալեայի ստեղծագործությունները լույս են տեսել 1920-30-ական թվականներին՝ նախորդելով Կամյուի և Սարտրի գործերին, իսկ Խուան Կառլոս Օնետտիի և մյուս գրողների երկերը լույս են տեսել ֆրանսիական էքզիստենցիալիզմի անկյունաքարային երկերի հետ միաժամանակ: Առանձին գր-

քով լույս տեսած Օնետտիի առաջին վիպակը՝ «Անդունդը», օրինակ, գրվել է 1939 թվականին՝ Սարտրի «Սրտխառնուք» վեպից ուղիղ մեկ տարի անց: «Անդունդը» կարդալով Սարտրի «Սրտխառնուքին» զուգահեռ՝ զարմանում ես թաքնված այն հոսանքներով, գրում է լատինաամերիկացի գրականագետ Խուան Գարբիել Վասկեսը, որոնք միավորում են այս երկու գրողներին: Այս հեղինակները միմյանց գործերը չեն էլ կարդացել, բայց և այնպես, զարմանք են պատճառում ինչպես իրարից հեռու ցեղերի հնագույն առասպելների անբացատրելի նմանությունները: Զարմանալի է, երբ մեկը որսում է, թե ինչ է գրվում 1939 թվին Լատինական Ամերիկայում՝ մի երկրում, որի գրականությունը դեռ կառչած էր 19-րդ դարի իր գրական ավանդույթներից»⁵:

Լատինաամերիկյան էքզիստենցիալիզմի և ընդհանրապես մոդեռնիզմի վրա մեծ ազդեցություն է թողել Ռոբերտո Արլտի արձակը: Կորտասարն ասել է. «Մենք բոլորս դուրս ենք եկել Արլտի գրչի տակից»⁶: Նույնը կարող էր ասել նաև Օնետտին: Նրա երազող հերոսը հիշեցնում է Արլտի «Չար խաղալիք» վեպի Սիլվիոյին: Սիլվիոն միայնակ, օտարված, թշվառ և աղքատ պատանի է, որին կյանքն անընդհատ մերժում, ստորացնում է՝ ի վերջո դարձնելով մատնիչ: Արլտի վեպը բաղկացած է չորս գլխից, յուրաքանչյուր գլուխը հերոսի ինքնահաստատման փորձերից մեկի ձախողումն է: Նա աստիճան առ աստիճան անկում է ապրում, մինչև մեղքերից ցածրագույնը՝ չուղայի մեղքը՝ մատնելով ընկերոջն առանց շարժառիթի, ինչպես առանց շարժառիթի կարող են գործել էքզիստենցիալ կերպարները, օրինակ՝ Ժոզե և Կամյուի հերոսները: Սիլվիոն հանկարծակի, ինչ-որ մի պահի զգում է, որ աշխարհը խորթ և օտար է իրեն ու ատրճանակ գնելով, որոշում է ինքնասպանությամբ վերջ տալ գոյությանը. «Ինձ հարկավոր չէ մահանալ... բայց ես պետք է սպանեմ ինձ», - չէի հասցրել մտածել այդ մասին, երբ այդ մտքի հանձարեղ անհեթեթությունը կաթվածահար արեց կամքս»⁷: Բայց այդ ամենի հետ Սիլվիոն նաև Կամյուի վաղ շրջանի հերոսների պես ռոմանտիկ, երազող կերպար է, նա երազում էր ընկնող աստղերի վրա հաշվիչ դնելու, անհավանական այլ գյուտերի մասին:

5 Juan Gabriel Vnsquez, Onetti en su pozo, <http://www.elespectador.com/columna138705-onetti-su-pozo>.

6 Cortazar J. ,Prefacioli en Roberto Arlt, Obras completas, 2 vols. Buenos Aires: Carlos Lohln, 1981, pp. 3-11.

7 Arlt R., El Juguete Rabioso, B. A., Losada, 2003, p.1 02.

Եթե «Չար խաղալիքը» գրված է իսպանական պիկարոյական վեպի ավանդույթներով, ապա «Կախարդական սեր»-ը զգալի չափով խոհագրական բնույթի ստեղծագործություն է: Արկածային տարրին այստեղ փոխարինում է գործողության բացակայությունը: Բալլերի համար ժամանակը կանգնած է, այն դեպքում, երբ «այն անցնում է աշխարհի բոլոր օրացույցներով»⁸: Այս նախադասությամբ ավարտվող գլխին հաջորդում է «Գորշ կյանք» գլուխը: Հերոսը հասարակությունից ինքնամեկուսացված մարդ է: Նրա կարծիքով հասարակությունը հիմնված է «հարկադրված համակեցության» վրա: Մարդկային համակեցությունը հնարավոր է միայն կեղծիքի շնորհիվ: Բալլերը մերկացնում է այդ կեղծիքի վրա հիմնված հասարակության արատները: Նրա համար կան սոցիալական տարբեր հարթություններում՝ վերևում և ներքևում գտնվող մարդիկ: Գրողը հակադրում է այս երկուսին և իրեն դուրս է պատկերացնում նրանցից: Նա բացարձակապես «ապասոցիալականացված» անհատ է և սոցիումի մեջ ապրող մարդու մասին ասում է. «Նրանք ապրում են: Բոլորը: Ծարժվում են մեքենայացված, ինչպես մրջյուններ: Մեկընդմիջտ սահմանված երթուղով: Տուն՝ աշխատանք, աշխատանք՝ տուն: Սրճարան: Սրճարանից՝ հասարակաց տուն: Հասարակաց տնից՝ կինոթատրոն: Նույն երթուղին: Անընդհատ: Նույն շարժումները: Նույն մտքերը: Մենք պարտավորություն ենք կատարում: Մենք կարգապահ մարդիկ ենք: Մենք կույսեր ենք: Մենք կատարում ենք մեր պարտականությունը: Հարգանք ենք տածում մեր մայրերի, մեր կանանց, մեր քույրերի, մեր զավակների հանդեպ: Առաքինի ենք: Մենք կատարում ենք մեր պարտքը: Ճիշտ այնպես, ինչպես մրջյունները: Մեկ այս կողմ, մեկ այն կողմ: Նրանք ապրում են: Կյանքը հենց դա է, որ կա: Չկա վախկոտ մեկը, որ չպարծենա իր առաքինությամբ այն պատճառով, որ կատարում է իր պարտքը»⁹:

Էքզիստենցիալ կերպարն ընդվզող մարդն է, որ որոշում է հակադրվել հասարակության կողմից մեկընդմիջտ հաստատված կարգուկանոնին ու երթուղուն: Հերոսի ողբերգությունը մարդու մենության ողբերգությունն է:

Լատինաամերիկյան էքզիստենցիալիզմի մյուս խոշոր ներկայացուցիչն Էդուարդո Մալեան է: Սկզբնական շրջանում Մալեան հիշեցնում է Ջոյսի «գիտակցության հոսքը»: Մալեան, ի տարբերություն վե-

8 Arlt R., El amor brujo. B. A., Losada, 1980, p. 158.

9 Նույն տեղում, էջ 199:

րը թվարկած լատինաամերիկացի մյուս հեղինակների, ավելի համակարգված ու հետևողական էքզիստենցիալիստ է և ավելի մոտ է կանգնած ֆրանսիացիներին, քան նրանցից որևէ մեկը. պատահական չէ, որ Գաբրիել Մարսելը բարձր էր գնահատում հատկապես նրա արձակը: Թեև Մալեան, անշուշտ, Մարսելին հարազատ էր նաև իր կրոնական հայացքներով:

Մալեայի հերոսները հավատում են Աստծո գոյությանը, թեև Աստված նրա համար անհաս է և անձանաչելի: Մարդն այս աշխարհում լքված է Աստծու կողմից, և ինքը պետք է կերտի իրեն, ինքն է միայն պատասխանատու իր անձի որակների համար: «Նրան քիչ էր հետաքրքրում, ինչ է դառնալու իր որդին՝ սո՛րբ, թե՞ ոճրագործ, չքավո՛ր, թե՞ հարուստ, երջանի՛կ, թե՞ ձախողակ. նա կարևորում էր միայն մենության մեջ մարդու խորքում հասունացող հոգեկան ուժերին, որոնց շնորհիվ իրագործվում է վերին նախախնամությունը¹⁰,- ասում է «Վիրավորանք» վեպի հերոսն իր հոր մասին: Ահա ևս աթեիստական և կրոնական էքզիստենցիալիզմի մեկ տարբերություն՝ մարդը կարող է ընտրել՝ իր ձակատագրի տնօրինումը պատահականությամբ, թե՞ «վերին նախախնամությանը» հանձնել: Եթե Կամյուն գտնում էր, որ աշխարհը, որքան էլ արքուրդ է, մարդ պետք է արժանապատվորեն կրի իր ձակատագիրը և պայքարի արքուրդի դեմ, ապա Մալեայի «ընդվզող մարդը» (Կամյուի բնորոշումն է. խոսքը «Վիրավորանք» վեպի հերոս Բլանի մասին է) ինքնասպանության է դիմում՝ «մարտահրավեր» նետելով «Երկնքին ու Բարձրյալին»: Բլանն անտեսված ու լքված է զգում իրեն, նա խորապես վիրավորված է ոչ միայն մարդկանցից, այլև Աստծուց: Ռոբերտո Արլտի հերոսի՝ Բալլերի նման նա գտնում է, որ կյանքն արքուրդ է, ուստի արքուրդ է նաև հանուն արքուրդի մղվող պայքարը: Կյանքի դեմ պայքարում մարդուն միայն պարտություն է սպասվում:

Ինչ վերաբերում է «գիտակցության հոսքին», ապա Մալեային արձակի այդ տեխնիկան հետաքրքրում է այնքանով, որքանով իբրև էքզիստենցիալիստ նա ուսումնասիրում է «գիտակցության վիճակները» (սա նաև Սարտրի խնդիրն էր), սակայն «գիտակցության հոսքի» հնարքների կիրառման մեջ գրողը երբեք չի հասնում ծայրահեղությունների, գաղափարական-փիլիսոփայական կողմը նրա վեպերում և վիպակներում ավելի էական է, քան ոճականը: «Վիպասանի գրառումներում» նա գրում է. «Որքան վնաս հասցրեց ոճաբան Ֆլոբերը

10 Mallea, E., El resentimiento. Sudamericana, B. A., 1970, p.342.

վիպասան Ֆլորերին»։ Գրողը համոզված է, որ «լավ ոճը վեպը գրկում է որոշ արժանիքներից»¹¹։

Մալեան հայտնի է իր եռագրության («Վիրավորանք», «Ինքնամփոփ մարդիկ» և «Խաբեություն» վեպերը) առաջաբանում վիպաշարի հղացման մասին նա գրում է. «Առաջին վեպի հղացքում կոնֆլիկտն է մարդկանց, երկրորդում՝ մարդու և սեփական անձի և երրորդում՝ մարդու և աշխարհի միջև»¹²։ Կարելի է ասել, որ վիպասանն առանձնացնում է օտարման երեք տեսակ՝ օտարում հասարակությունից, ինքնօտարում և օտարում իրականությունից։

Մալեայի երկերի գլուխգործոցը «Չավես» (1953) վիպակն է, որի համանուն ինքնամփոփ ու լուսկյաց հերոսը հազվադեպ է խոսքի բռնվում մարդկանց հետ՝ խոսելով իր համար ձակատագրական նշանակություն ունեցող պահերին միայն։ Ընդհանրապես Մալեայի բոլոր ստեղծագործությունների հերոսները լուսկյաց ու ինքնամփոփ մարդիկ են, որոնք իրենց հոգու խորքում կրում են այդ ողբերգությունը և հենց այդ պատճառով էլ նրա վեպերում ու վիպակներում չափազանց քիչ է, գրեթե բացակայում են երկխոսությունները։

Լատինաամերիկյան էքզիստենցիալիզմի հեղինակներից կարելի է առանձնացնել նաև չիլիացի հայտնի վիպասան Խոսե Դոնոսոյին։ Նրա լավագույն ստեղծագործությունը՝ «Հարևան այգին» վեպը, օտարության մեջ գտնվող, օտարությունն ու իրենց մենությունը խորապես վերապրող, բայց նաև միմյանց օտար ամուսնական զույգի մասին է պատմում։ Իրադարձային առումով երկում նշանակալից ոչինչ չի կատարվում։ Խուլիոն ու Գլորիան դատապարտված են «իրադարձություններից աղքատ» մի գոյության։ Այդ առումով այն տիպիկ էքզիստենցիալիստական ստեղծագործություն է։ Կինը լրագրող է, ամուսինը՝ ձախողված վիպասան, որ ամեն գնով, նախանձելով լատինաամերիկացի հեղինակների՝ Մարկեսի, Կորտասարի, Ֆուենտեսի փառքին, փորձում է հրատարակվել Իսպանիայի հայտնի հրատարակչություններում ու հաջողության չի հասնում։

Եթե ըստ Սարտրի հույսը ոչ մի դեպքում չպետք է դառնա մարդկային գործունեության նախապայման, ապա ըստ Դոնոսոյի «Հույսը բոլոր չարիքներից վատթարագույնն է»¹³։

Էքզիստենցիալիզմի գրականության կարևորագույն թեմաներից է

11 Mallea E., Notas de un novelista, B. A., Emecne, 1954, p.122.

12 Mallea E., El resentimiento. Sudamericana, B. A., 1970, p.7.

13 Donoso J., El lugar sin límites. S., Alfaguara, 2011. p. 154.

նաև մենության թեման, որը նույնպես բնորոշ է լատինաամերիկյան շատ հեղինակների։ Կարելի է հիշել նույն Օկտավիո Պասի ամենահայտնի՝ «Մենության լաբիրինթոսը» գիրքը (1950)։ «Մենության դիալեկտիկան» էսսեում նա գրում է. «Միայն մեքսիկացին չէ, որ մենության, լքվածության և ինքնօտարման զգացում է ապրում։ Բոլոր մարդիկ կյանքում ինչ-որ մի պահի իրենց միայնակ են զգում. ըստ էության մարդը միշտ էլ միայնակ է։ Չէ՞ որ ապրել նշանակում է անընդհատ հրաժեշտ տալ նրան, ով մի ժամանակ եղել է, դառնալով մեկը, որ պիտի լինենք հավերժ մեզ խորթ գալիքի մեջ։ Մենությունը մարդկային կեցության խորքային իմաստն է։ Միայն մարդը կարող է լինել միայնակ և միայն նա չի կարող գոյատևել առանց իր նմանի։ Մարդը հաղորդակցման կարող է և փնտրտուքի մեջ է։ Այդ իսկ պատճառով ամեն անգամ մեզ մարդ զգալով, մենք զգում ենք ուրիշի բացակայությունը, մենք մեզ միայնակ ենք զգում»¹⁴։ Դժվար է գտնել մենության էքզիստենցիալ իմաստին նվիրված մեկ այլ խորքային ձևակերպում, քան Պասից մեջբերված խոսքերն են։ Իր էսսեում նա նկարագրում է, թե ինչպես է մարդը ծնվելուց հետո ընկնում օտար ու թշնամական աշխարհ, ինչպես է աստիճանաբար մարդու՝ աշխարհից տարանջատված լինելու զգացումը փոխվում մենության զգացման։ Միայնակ մարդը լքված է Աստուծոց։ Մենությունը դառնում է մարդու ձակատագիրը, նա փորձում է փախչել նրանից, ինչը չի հաջողվում։ Մենությունը պատիժ է, հատուցում և ապաշխարում։ Ծնունդը և մահը մարդուն մենությամբ փորձելու միջոցներ են։ Մարդը ծնվում և մահանում է մենակ։ Մահվան ապրումը ժամանակի հետ փոխակերպվում է սեփական մահկանացության գիտակցման, իսկ մեր շուրջն ամեն ինչ հիշեցնում է, որ մենք պետք է մահանանք։ Մեզ սովորեցնում են ոչ այնքան ապրել, որքան մահանալ։

Մարդը փորձում է փրկվել սիրելով։ Պասն անդրադառնում է նաև սեռերի հարաբերության մեջ մենության վերապրմանը։ Ըստ նրա, սիրո տառապանքը մենության տառապանքն է հենց։ Մենք հաղորդակցվում ենք ոչ թե կնոջ հետ, այլ նրա՝ մասին ունեցած մեր պատկերացման։ Տղամարդը և կինն էության մեջ օտար են միմյանց։ Սերը ընտրություն է, բայց մարդը չի ընտրում, նրան պարզապես թվում է, թե ինքն է կատարում. ընտրության ազատությունը պատրանք է։ Այսպիսով, Պասը, մենության տեսանկյունից դիտարկելով էքզիստենցիալ հասկացությունները, ուրվագծում է մարդու երկրային ողջ ուղին։

14 Octavio P., EL LABERINTO DE LA SOLEDAD, cd. Fondo de Cultura Económica, S.A., M., 1950, p. 5.

Բանալի բառեր.- լատինաամերիկյան գրականություն, էկզիստենցիալիզմ, մենություն, ձախողում:

Резюме

Марине Киракосян

ОСОБЕННОСТИ ЛАТИНОАМЕРИКАНСКОГО ЭКЗИСТЕНЦИАЛИЗМА

Латиноамериканский экзистенциализм сформировался под влиянием испанского экзистенциализма, который предшествовал немецкому и французскому и начал развиваться параллельно европейскому, почти одновременно. Но в отличие от французского, латиноамериканский является исключительно литературным феноменом и у него нет философско - теоретической основы.

Яркими представителями латиноамериканского экзистенциализма являются Эдуардо Малеа, Роберто Арлт, Эрнесто Сабато, Хосе Доносо и Хуан Карлос Онетти.

Summary

Marine Kirakosyan

PECULIARITIES OF LATIN AMERICAN EXISTENTIALISM

The Latin American existentialism has evolved in parallel with the European existentialism under the influence of the Spanish existencial movement which in fact preceded both French and German existentialism. Just like in France it is solely a literature phenomenon without any philosophical theory in its basis. The most renowned authors of Latin American existentialism are Eduardo Malea, Roberto Arlt, Ernesto Sabato, Jose Donoso, Juan Carlos Onetti.

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ՝ ՄՈՏԻՎԸ՝ ԸՍՏ ԼԱՈ ՄԱՅԻ «ՄԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐԻ

Սույն հոդվածը գրելիս սահմանափակվել ենք *միայն* Լատ Մայի պատմվածքներում կոռուպցիային վերաբերող մոտիվների քննությամբ: Այն խիստ կարևոր ենք համարել՝ մի քանի առանձնահատկություններից ելնելով:

Ա.կոռուպցիայի, կաշառակերության ի հայտ գալը գեղարվեստական գրականության մեջ ինքնին խոսում է այն մասին, որ հասարակական կյանքում պրոբլեմը դառնում է շոշափելի, հրատապ, որի հետևանքով էլ «սպրդում» է գրականություն: Երբ գրողը անդրադառնում է կաշառակերությանը, ըստ էության, խախտում է տաբուն, և նրա ստեղծագործությունները ստանում են քաղաքական շեշտադրում, իսկ բուն գրողը ականայից դառնում է մտավորական-տեր², քաղաքացիական հասարակության ու խոսույթի կերտման աջակից:

Բ.Որքան մեզ հայտնի է, կոռուպցիայի մոտիվը առանձին քննության առարկա չի դարձել հայալեզու գրականագիտական, պատմագիտական ուսումնասիրություններում: Կաշառակերության, կոռուպցիայի, գողության, «ագցելու» մոտիվները³ դեռևս սպասում են իրենց ու-

1 Այս հասկացությունը օգտագործում ենք որպես սեռանիշ, որպեսզի խուսափենք այս համընդհանուր երևույթին տրվող այլ բառերի՝ տեսականիշների (օր.՝ կաշառք, դարձագումար, «պատիվ տալ» (почеть), բյուջեի թալան (=казнокрадство) և այլն) մանրամասն քննությունից: Ստորև շարադրվող քննության փորձում հստակ տարանջատում չենք մտցրել կաշառքների տեսակների վերաբերյալ՝ ուղիղ ու անուղղակի, նյութական և աննյութական և այլն:

2 Ինտելեկտուալ-տեր մտավորականի մոդելի մասին տե՛ս Տիգրան Սիմյան, 1918-1939 թթ. գերմանական վեպի գաղափարագեղարվեստական պրոբլեմատիկան, Երևան, 2015, էջ 15, 47-48, 49-50, 113, 115, 427:

3 Մի ձգգրտում անենք: Եթե թեման չի ենթադրում գործողություն, ապա նախընտրելի է օգտագործել «թեմա» բառը, իսկ եթե թեման, որն անգամ արտահայտվում է գոյականով, բայց թաքնված կերպով ենթադրում է գործողություն, գործընթաց, ապա գոյականի հետ «մոտիվ» բառը օգտագործելը սխալ չէ: Օրինակ՝ գողության, կաշառակերության, դարձագումարի, կոռուպցիայի մոտիվները, բայց ոչ՝ բնության, արևի ու լուսնի մոտիվները: